

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԽԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՑՄԱՆ

ԽՐԱԻՔ-ԼԱՐՈՂԱՑՈՂԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ-ԳՐՑՈՒՅՎԱՆ Հ 1


ԱՐՄՈՆՈՎ, Ս. Ն.

Ա. ՐԵՎ. Գ. ԵԼՅԱՆ ԳԱԼԵԳ. Ա. ՅԻ

(ԱՅՍՈՒԿԻ)

ԱԳՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ





ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈԼԵԳԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ
633. 3 ԿԵՐԱԲՈՒՅՑ Ե

1932 թվականին կերերի Համամիութեանական Գիտահետազոտական Ինստիտուտի և Բուսաբանական Ինստիտուտի եքսպեդիցիաների մասնակիցները հյուսիսային կովկասի, Դաղստանի, Հայաստանի և Վրաստանի լեռների շրջակալրում հագաքեցին նոր կերաբույսի՝ արևելյան գալեգայի (այծուկի-ԿՕԶ-ԱՅՏԻԿ) սերմեր։ Վաղորոք կատարված վոչ շատ մեծ փորձնական ցանքերի հիման վրա այդ բույսից հագաքված սերմերը ցանվեցին Մոսկվայի մարզի պարմաններում (կերերի Ինստիտուտի փորձնական տնտեսության մեջ՝ Մոսկվայի մոտ)։

Հետեւելով արևելյան գալեգայի գարգացմանը, հաջողվեց պարզել, վոր այդ բույսն ունի գյուղատնտեսության համար սպակար մի շարք հատկություններ և դրանով աչքի յե ընկնում մյուս ընդավոր խոսաբույսերի շարքում նախ և առաջ գալե-

A 3654

գան բազմամյա բույս եւ Միննուշն վայրում
(հողամասում) կարող եւ տալ անտեսակա-
նորեն արժեքավոր բերք 8-10 և ավելի
տարիների ընթացքում։ Արևելյան գալեզան
ցրտադիմացկուն եւ, չի փուլմ, հիվանդու-
թյուններին դիմանում եւ և վնասատուներից
չի տուժում։

Կերերի Խնստիառութի փորձնական տնտե-
սությունում ցանելու տարին մի հեկտարից
ստացվեց հետեւյալ բերքը՝ հում կանաչ մաս-
աւ—68 ցենտներ, խոտ 20 ցենտներ։ Ցանքի
յերկրորդ տարին յերկու քաղից ստացվեց՝
հում կանաչ մասսա—177 ցենտներ, խոտ—
57 ցենտներ։

Արևելյան գալեզայի ամենագնահատենի
հատկությունը նրա վաղ գարնանն աճելու
ընդունակությունն եւ Այդ հանգամանքը
խոշոր նշանակություն ունի. դրա շնորհիվ
հնարավոր եւ լինում գալեզան ոգտագործել
վորպես լրացուցիչ կանաչ կեր հենց այն
ժամանակ, յերբ կոլտնտեսությունն արօ-
տային կերի պակասություն եւ զգում։

Արենլիան գալեղայի կանաչ մասամբ
հաջողութիւնը կարելի յե ոգտագործել նաև
վորպես հումույթ՝ վաղ գարնանային և ուշ
աշնանային սիլոս պատրաստելու համար։
Վերջապես գալեղան տալիս ե բարձրորակ
խոտ, վորը լուր մննդանցութերի պարունա-
կությամբ և մարսելիությամբ հավասարվում
ե այնպիսի առաջնակարգ խոտաբույսերի,
ինչպիսիք են լեռելնուկը և առվույտը։

Սակայն, այդ արժեքավոր կուլտուրային
տարածումն արգելակվում է սերմերի բացա-
կալության պատճառով։ Ներկայումս արևե-
լյան գալեղայի միակ աղբյուրը հանդիսա-
նում են նրա վայրի աճող թփուտները
Հյուսիսային Կովկասում, Դաղստանում, Հա-
յաստանում և Վրաստանում։

ԳԱԼԵԳԱՅԻ ԹՓՈՒՏՆԵՐԻ ՍՃՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ

Բնական պայմաններում գալեղան հան-
դիպում ե առավելապես լուսերի լանջերին։
Ժողի մակերեսույթից 1200 մետրից վոչ
բարձր, հումուսով հարսաւած անառային

հողերում—նոսրացած անտառներում, ծառաթփուտներում և անտառային բացատներում:

Պարզ կողմնորոշվելու համար ցույց տանք Հայաստանում վայրի գալեգայի արգեն հայտնի թփուտների աճմտն վայրերը։

Ստեփանավանի շրջանի Գյուլաքարակ գյուղի մոտ—10 հեկտար, Լոռու անտառատոհմ. խորհտնտեսության շրջակալքում—12 հեկտ., ձիաբուծարանի № 72 արոտամասում 10 հեկտ., Կիրովականի շրջանում՝ Կիրովականի վուրձնական տնտառամասում—8 հեկտար։

Այս ցուցակով բնականաբար չեն ուղարկում արևելյան գալեգայի վայրի աճող թփուտների վայրերը և տարածությունը։ Արևելյան գալեգայի կուլտուրայի հաջողաբարամբ տարածեն ամբողջապես կախված են նրա նոր թփուտների հետագա հայտաբերման, նրա սերմերը հավաքելու և կուտարական, լավ մշակված հողերում բարձացնելու աշխատանքից։

ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱԶԵԼ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈԼԵԳԱՆ ՅԵՎ
ՏԱՐԲԵՐԵԼ ՄՅՈՒՍ ԲՈՒՅՈՒՐԻՑ

Արևելյան գալեղան պատկանում է ընդ-
դավորների ընտանիքին, այսինքն՝ այն ըն-
դանիքին, վորին պատկանում է յերեքնուկը,
առվույտը, վիկը, կորնդանը և այլու Արևե-
լյան գալեղան ունի յերկար, լուսափայլ
արմատներ, վորոնք թափանցում են հողի
ներքին շերտերը 60—80 սմ խորությամբ։
Դիխավոր արմատի կողքի ճյուղավորումների
վրա աճում են բազմաթիվ (240—300 հատ)
և տարբեր մեծությամբ ու ձեի պալարներ,
վորոնց մեջ կան մանրագույն ելակներ—բակ-
տերիաներ (մանրեներ), վորոնք ընդունակ
են ողից լուրացնել ազուր և նրանով հարս-
աւացնել հողը։

Արևելյան գալեղայի ցողունն ուղղա-
կանգուն ե, ունի փայլատականաչ դույն։
Յողունի վողջ ուղղությամբ անցնում են
հարթ, վոչ խոր ակոսներ։

Դալեղայի միջին բարձրությունը, ընտ-

կան պարմաններում, հասնում ե 125—140
սանտիմետրի:

Առանձին բույսերի բարձրությունը
հասնում է մինչև 2 մետրի: Գալեգայի ցո-
ղունի վրա լինում ե 8—9 հիմնական
տերև:

Տերևները բարդ են, անդուգափետ-
րային, վորոնց յերկարությունը 14-ից
մինչև 26 սանտիմետր ե: Ցուրաքանչյուր
տերևների բաղկացած ե 9-ից 15 տերևնիկներից:
Յողունի ներքեխի մասում գտնվող տերևնիկ-
ները ձվաձև են, իսկ վերեկի մասում գտնը-
փողները՝ յերկարավուն-ձվաձև: Տերևնիկների
յերկարությունը հասնում է 4—8 սանտի-
մետրի, լայնությունը՝ 2,5 սմ, տերևների
գույնը՝ ներքեկի մասում դեղնավուն-կանաչ
ե, վերևում՝ մուգ կանաչ: Տերևների յերա-
կավորումը ցանցաձև ներվային ե:

Տերևների լեզերքները պատված են
թարթչանման մազմզուկներով: Վերին տե-
րևնիկը վերջանում է $1/2$ — 1 մմ յերկարու-
թյամբ փոքրիկ փշիկով: Հիմնական տերևնե-

ըկ գլխավոր միջին յերակները պատված են
մանրիկ մազիկներով, վորոնք առանձնա-
պես խիտ են և ուժեղ՝ տերևեկների ամրաց-
ման տեղում։ Տերևները ցողունին ամրա-
նում են կոթիկների ոգնությամբ։ Ցողունի
ներքեի մասում տեղափորված տերևների
կոթի յերկարությունը հասնում է 3—16
սանտիմետրի։ Ցողունի վերեկ մասում տե-
ղափորված տերևների կոթիկների յերկարու-
թյունը հասնում է 1-ից մինչև 6 սանտի-
մետրի։

Յուրաքանչյուր բույսի վրա տեղափոր-
ված են 3—4 ուղղանիստ ծաղկեփունջ։
Նրանցից յուրաքանչյուրն ունի 50—55 ծաղ-
կիկ։ Արևելյան դալեգալի ծաղիկները կա-
պուլտ են՝ մանիշակագույն յերանգով։ Նրանք
նստած են կարճիկ ծաղկափոտիկների վրա։

Դալեգալի պտուղը գծալին ե, թեթև
կերպով ծոված, ծայրը բղաձև սուր է։ Ուն-
քի յերկարությունը 3—4 սմ, լայնությունը՝
2,5—3 միլիմետր։ Ունդի մակերեսը հարթ
է կամ թեթևակի ալիքավուն ուժեղ արտա-
հայտված յերակափորմամբ։ Դալեգալի ուն-

դի (պատիճի) մեջ գտնվում է Յ-ից մինչև
Շ-ը սերմ: Իրենց ձևով նրանք նման են
առվուլյտի սերմերին, բայց վերջիններից մի
քանի անգամ մեծ են. Գալեգալի սերմերը
դեղնավուն են:

ԻՆՉՊԵՍ ՏԱՐԲԵՐԵԼ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱԼԵԴԱՆ ԴԵՂԱՏՈՒ ԳԱԼԵԳԱՅԻՑ

Արևելյան գալեգայից բացի գոյություն
ունի բուսաբանական մեկ ուրիշ այլատեսակ՝
գեղատու գալեգան: Դեղատու գալեգայի
հիմնական տարրերություններն արևելյան
գալեգայից սրանք են՝

Արեվելյան գալեգայի
նշանները

Տերեներն ուժակ—ձգու-
ակ են:

Հողի մեջ յեղած մասում
առաջանում ե վերաբմատ.

Մազիկները կազույտ
են՝ մանիշակագույն յե-
րանդով:

Դեղատու գալեգայի
նշանները

Տերեներն ուժեն ագելի
յերկարավուն ձեւ:

Վերաբմատ չկա, աը-
մատն առանցքային ե (կո-
թափոր), շաղկամածե, խոր
մանում և հողի մեջ:

Մազիկները գունատ մա-
նիշակագույն են. դրյու-
թյուն ունեն նրանց այ-
լտանակներ՝ սպիտակ և
գորշագույն ծաղիկներով:

Դեղատու գալեգան, վորպես կերային
բույս, նույնպես արժանի յե խոշոր ուշադ-
քության, և նրա սերմերը նույնպես պետք է
հավաքել. Սակայն հարկավոր ե ի նկատի ունե-
նալ, վոր չի կարելի արևելքան գալեգայի և
գեղատու գալեգայի սերմերն իրար հետ խառ-
նել. Յերկու տարրեր տեսակի գալեգաների
ունդերը (պատիճները) և սերմերն ար-
տաքին տեսքով միատեսակ են և տարբե-
րել չի կարելի:

Դրա համար ել անհրաժեշտ ե արևելյան
և գեղատու գալեգաների սերմերն առանձին
հավաքել և առանձին ել պահել:

ԳԱԼԵԳԱՅԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Գալեգալի սերմերի հաստևացման ճիշտ
վորոշումը հավաքելու համար ունի խոշոր,
գործնական նշանակություն:

Գալեգայի չհասունացած ժամանակ հա-
վաքված սերմերը վորպես կանոն լինում էն
նվազ և ունեն ցածր ծլունակություն: Ժա-
մանակին չհավաքված սերմանոցներում սեր-

մերի ուժեղ թափվելու հետևանքով կորուստներ են լինում:

Դաշեգայի սերմերի հավաքման համար ճշգրիտ ժամկետներ ցույց տալ հնարավոր չեն, վորովհետև նրանք մեծ չափով կախված են տվյալ տարվա ողերեվութաբանական պայմաններից: Յերաշտ տարիներին գալեգայի սերմերը հասունանում են ավելի վաղ՝ քան սին տարիներին, լեռը մթնոլորտային աեղումները (անձրիները) լինում են բավականաշափ, կամ անգամ առատ:

Դաշեգայի սերմի հավաքելու համար հասունացած լինելը կարելի յե վորոշել նրա աւնդի (պատիճի) գույնով: Հենց վոր սերմերը հասունանում են, ունդի փեղկերը դառնում են մուգ-դարչնագույն: Բայց գալեգայի սերմերը հասունանում են անհավասարաշտի, ուստի հասած սերմերի թափվելուց խուսափելու համար չպետք է սպասել, մինչեւ վոր բոլոր ունդերի փեղկերը դառնան մռագ-դարչնագույն:

Սերմերը կարելի յե սկսել հավաքել այն

Ժամանակը, լեռը ունդերի $40-50^{\circ}/_0$ -ի փեղ-
կերը մուգ-դարչնագույն են, $30-35^{\circ}/_0$ -ը՝
բաց դարչնագույն, $15-30^{\circ}/_0$ ը՝ կանաչա-
վուն-դարչնագույն։

ԳԱԼԵԳԱՅԻ ՍԵՐՄԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ, ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Նկատի ունենալով, վոր մյուս խոտա-
բույսերի հավաքառեղում գալեգան աճում
է միայնակ փնջերով, կամ վոչ շատ մեծ
ածուներով ($20-50$ քառ. մետրի չափ),
որա սերմերի հավաքը պետք է կատարել
ձեռքով, բույսի փնջերից ունդերը պոկելու
միջոցով։ Գալեգայի ունդերը կարելի յէ կալ-
սել հացահատիկային կուլտուրաների համար
գործածվող վոչ շատ մեծ ձեռքի կալսիչով,
իսկ յեթե քանակազես քիչ ե՝ ձեռքով։

Կալսելուց առաջ ունդերը (պատիճները)
անհրաժեշտ ե լավ չորացնել։

Գալեգայի սերմերը կարելի յէ պահել
առանց կալսելու—ունդերով։

Գալեգայի սերմերը հավաքելուց հետո

պետք ե ուղարկել փորձակալանին հետեւալ
հասցեյով.

Յերևան, Նալբանդյան փողոց № 50,
Հողժողկոմատ, Հանրապետական Անասնա-
բուծական փորձակալան, կոլտնտ. փորձարկ-
ման բաժին:

Սերմերը կարելի լե ուղարկել կալսված,
ինչպես և առանց կալսելու—ունդերով (պա-
տիճներով):


Գալեգայի կալսված մաքուր սերմի 1
կիլոգրամը գնահատվում է 10 ռուբլի,
առանց կալսելու՝ ունդերով—արժե 4 ռուբլի:
Պարկիկներում սերմերի հետ միասին պետք
է անպայման դնել նաև լրացված անկետան
(վոր կցվում ե վորպես հավելված) և ան-
պայման ճշտութիւմբ ցուց տալ սեփական
հասցեն, վորպեսզի դրամական արժեքը հնա-
քավոր լինի ուղարկել:


Միաժամանակ գալեգայի հավաքված
սերմերը կարելի լե ոգտադործել կոլտնտե-
սության մեջ փորձական ցանք կատարելու
համար: Իսկ թե ինչպիսի փորձեր կարելի

յե զնել գալեգալի վրա և, ինչպես պետք է կատարել այդ փորձերը, այդ մասին փողակայանը հատուկ հրահանդ կուղարկի այս ժամանակ, լեռը ձեզանից կստանա հարցումներ:

Կոլտնտեսության փորձադաշտում ցանկող գալեգայի սերմերի նմուշները նույնպես պետք եւ ուղարկել փորձակայանին՝ կցված անկետայի հետ միասին:

A 3654





ԽՐԱՆԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ.

Հանրապետական Անասնաբուծության
փորձակայանը խրճիթ-լաբորատորիաներին
մեթոդական գործնական խորհուրդներով,
անասնաբուծության և կերպարայթայթման
հարցերի վերաբերյալ ցուցմունքներով ոգ-
նելու նպատակով՝ Գյուղհատի հետ կազմում
և լույս և ընալայում մատչելի գրքույկներու

Գրքույկները մեծ մասամբ ունենալու
յին հրահանգների ընսույթ, վորոնց մեջ լու-
սարանվիկու յին փորձեր կատարելու նպա-
տակը, փորձերի կազմակերպման տեխնիկան
և հետազոտական դիտողությունների հաշ-
վառման ձևերը:

Ցեթե կլինիկն կոլտնտեսություններ և
խրճիթ-լաբորատորիաներ, վորոնք ցանկու-
թուն կունենան անասնապահության և կե-
րահայթայթման հարցերի շուրջը նոր փոր-
ձեր դնել և այդ ուղղությամբ հետազոտու-
թյուններ կատարել, խնդրում ենք այդ մա-
սին հայտնի փորձակայանի կոլտնտեսա-
կան-փորձարկման բաժնին, անհրաժեշտ մե-
թոդական ցուցմունքներ ստանալու համար:

Մեր հասցեն՝ Ցերեան, Հողմողկամատ, Նալ-
բանդյան № 50, Հանրապետական Անասնաբուծական
փորձակայանի կոլտնտեսական փորձարկման բաժին:



Ամբողջիւն՝ Ս. Խոստակյան, Նշ. Մալաթյան
Քարդա. Մ. Ավետիսյան

Արքադրիչ՝ Գ. Սարոյան

Դադիլու լիազոր Խ. 1936

Հքառ. 316

Տիրու 1500

Պատվիր Խ. 577

Հանձնված և արագորության 22/VIII 1936 թ.

Սառադրված և պատրիկու 5/IX 1936 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0038664

29 կոմ.

0343

620



ԿԱՐ
ՏԱՐ

С. Н. СИМОНОВ

Опыты по агротехнике
голуби восточной

Сельхозгиз

1926

Ереванъ